



Սիրելի հայրենակիցներ,

Երկու ծանրակշիռ տարիներ անցած են արդէն այն տխուր օրէն, երբ Կիպրոսի կառավարութիւնը ակամայ ընդունեց Եւրոգօտիի պարտադրած վարկային խիստ համաձայնագիրը, փրկելու մեր փոքր կղզին վերջնական սնանկացումէ: Երկիրը փրկուեցաւ անմիջական վտանգէն, սակայն առնուած որոշումներուն հետեւանքները, տակաւին, իւրաքանչիւր օր, իր մորթին վրայ կը զգայ պայքարող Կիպրացի ժողովուրդը:

Յրապարակուած տուեալներուն համաձայն եւ ըստ Աշխատանքային Գրասենեակի 2014 Դեկտեմբեր ամսուան ցուցանիշներուն, վեց ամիսներէ աւելի գործազուրկներուն 41 տոկոսը կը շարունակէ անգործ մնալ: Հակառակ դրամատնային համակարգին կայունացման, երկրի տրնտեսական զարգացումն ու աճը ո՛չ մէկ բարելաւում կրած են, այլ ընդհակառակը, կը շարունակեն չնչին ետդարձ արձանագրել: Կառավարութիւնը տարբեր միջոցներու կը դիմէ վերաշխուժացնելու տնտեսութիւնը ու թափ տալու զարգացման:

Տիրող դժուար տնտեսական պայմաններուն հետ զուգահեռ, քաղաքական ոլորտէն ներս ալ կառավարութիւնը ամէն ճիգ կը գործադրէ վերադառնալու բանակցութեան սեղան, յանգելու կղզին վերամիացնելու արդար լուծումի մը, որ ընդունելի ըլլայ բոլորին կողմէ, սակայն առանց զիջելու կիպրայունական կողմի հիմնական սկզբունքներէն:

Երկրին մէջ տիրող վերոնշեալ պայմանները, որեւէ ձեւով չկասեցուցին Երեսփոխանական Գրասենեակի ծրագ-

րած գործունեությունը, որոնք հեզասահ կերպով կը շարունակուին բոլոր բնագաւարներէ ներս, աշխոյժ պահելով գաղութն ներս տիրող հայաբոյր մշակութային ու ընկերային կեանքը:

Առ այժմ, մեր հիմնական աշխատանքները կեդրոնացուցած ենք ապահովելու համար Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման ձեռնարկներուն յաջողութիւնը: Ներփակ պիտի գտնէք 2015 տարուան ընթացքին իրագործելիք միջոցառումներու եռալեզու ճոխ ցանկը, որ միայն կիպրահայութեան չի վերաբերիր, սակայն նախ եւ առաջ կ'ենթադրէ ու կը պահանջէ կիպրահայ հասարակութեան անսակարկ մասնակցութիւնը: Նախ մենք պէտք է յիշենք, որպէսզի կարենանք մեր շուրջիներէն պահանջել այն ինչ կ'ակնկալենք: Մենք, այն երկիրներուն մէջ որ կ'ապրինք, պէտք է կարենանք պահանջատիրութեան սկզբունքով վարակել մեր շուրջիները, որպէսզի միջազգային կարծիքը Հայկական Ցեղասպանութեան հանդէպ հզօրանայ՝ ի նպաստ մեր Սուրբ Դատին: Հետեւաբար, կոչ կ'ուղղեմ բոլորիդ, ձեր ներկայութեամբ ու մասնակցութեամբ, սատար հանդիսանալու Հայկական Ցեղասպանութեան Կիպրոսի 100-ամեակի Ոգեկոչման Յանձնախումբի ծրագրած ձեռնարկներուն: Հաւատացէք, այն ծրագիրը որ պիտի գործադրուի յարգելու 1.5 միլիոն մեր անմեղ նահատակներուն յիշատակը, ոչինչ է, բաղդատած դար մը առաջ անոնց տարած ահաւոր չարչարանքին, անբացատրելի տանջանքին ու թափած արիւնին հետ: Մեր պարտքն է յիշել, յիշեցնել եւ պահանջել մինչեւ արդար հատուցում:

Հոս տեղին է նշեմ, թէ Ապրիլ 21-25 Հայաստան կը մեկնիմ, ներկայ գտնուելու Երեւանի մէջ կայանալիք Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման պետական մակարդակի ձեռնարկներուն, որուն համար պաշտօնական հրաւեր ստացած եմ Հայաստանի Հանրապետութեան Նախա-

գահ Ն. Վ. Սերժ Սարգսեանին:

Նախքան խօսքիս աւարտը, կը փափաքիմ հետեւեալ մտածունս բաժնել ձեզի հետ: Հակառակ անցեալ տարւայ Մակարավանք ուխտագնացութենէս ետք ունեցած երկմտանքիս, այս տարուան այցելութիւնը զանց առնելու, կառոյցին պարզած անապահով վիճակին պատճառով, որոշեցի վերատեսութեան ենթարկել որոշունս եւ ամէն գնով կազմակերպել այս տարուան ուխտագնացութիւնը, զայն նուիրելով Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին, անգամ մը եւս վերանորոգելով եւ վերահաստատելով մեր ուխտը, թէ Մակարավանքը մերն է եւ թէ աշխարհասփիւռ Հայն ու Կիպրահայը, տէր է ու կառչած կը մնայ իր պատմամշակութային արժէքներուն եւ կը յիշենք ու ետ կը պահանջենք մեր սիրելի վանքը: Ուրեմն, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, համագործակցութեամբ Ազգային Առաջնորդարանին, պիտի այցելենք Ս. Մակարայ Վանք, Կիրակի, 10 Մայիս 2015-ին: Ուխտագնացութեան մասին յայտարարութիւնն ալ ներփակած ենք «Լրատու»ի այս թիւով:

Սիրելիներ,

Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ս. Ջատիկին առիթով ընդունեցէք իմ սրտագին բարեմաղթութիւնները:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Վարդգէս Մահտեսեան

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

Հայկական Ցեղասպանության

100-ամեակի ոգեկոչման ձեռնարկներու ամփոփում

Հայկական Ցեղասպանության 100-ամեակի Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբը, 2015 տարուան ընթացքին, ձեռնարկած է ոգեկոչման հանդիսություններու շարք մը իրագործել, պատշաճ կերպով յարգելու մեր անմեղ նահատակներուն յիշատակը եւ անգամ մը եւս ցոյց տալու ողջ աշխարհին, թէ Հայ ժողովուրդի զաւակները ուր ալ գրտնուին, նոյնիսկ դար մը ետք, տակաւին պահանջատէր կը մնան իրենց սուրբ դատի արդար լուծման ու հատուցման:

Ստորեւ, հակիրճ ձեւով պիտի անդրադառնանք հիմնական ձեռնարկներուն.-

Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբի ձեռնարկներուն մեկնակետը պիտի հանդիսանայ 2 Ապրիլ 2015-ը, Կիպրոսի եւ Հայաստանի Հանրապետութիւններու միացեալ դրոշմաթուղթի թողարկման պաշտօնական հրապարակումով, որ տեղի պիտի ունենայ Cleopatra Պանդոկին մէջ, ներկայութեամբ երկու երկիրներու խորհրդարաններու Նախագահներուն: Դրոշմաթուղթը պիտի կրէ Մելգոնեան Կրթական Հաստատութեան պատկերը: Տեղին է յիշել, թէ Պրն. Մահտեսեան առաջին անգամ, մէկ տարի առաջ, դրոշմաթուղթի հարցը արծարծած էր հանգուցեալ նախկին Հաղորդակցութեանց եւ Գործերու Նախարար՝ Պրն. Տասու Միթցոպոլոսի հետ:

Նոյն օրը, կէսօրէ ետք, Կիպրոսի խորհրդարանէն ներս, ելոյթ պիտի ունենան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի Նախագահը եւ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը:

Պիտի յաջորդէ ցուցահանդէս, 3 Ապրիլ 2015-ին, «Հայկական Ցեղասպանութիւն. Ապացոյցներ լուսանկարներու եւ մամուլի էջերու ընդմէջէն» նիւթով, Famagusta Gate-ի ցուցասրահին մէջ: Պիտի ցուցադրուին սրտաճմլիկ տե-

սարաններ պարունակող ջարդի լուսանկարներ եւ միջազգային մամուլի էջերէ թղթակցութիւններ եւ երգիծանկարներ:

18 Ապրիլին, PASYDY-ի մէջ, տեղի պիտի ունենայ թատերական ներկայացում՝ «Ուտքի, դատարանն է գալիս» Սողոմոն Թեղիբեանի դատավարութիւնը եւ յաջորդող օրերուն, պիտի իրագործուին Ապրիլեան յիշատակումի ականդական քայլարշան ու արիւնի տուչութիւնը:

30 Ապրիլին, Ստրովոլուսի Քաղաքապետարանի հանդիսասարահին մէջ տեղի պիտի ունենայ 100-ամեակի գլխաւոր հանդիսութիւնը, ներկայութեամբ պետական-պաշտօնական անձնաւորութիւններու:

17 Մայիսին, դարձեալ Ստրովոլուսի Քաղաքապետարանի հանդիսասարահին մէջ, իրենց տարեկան ելոյթը պիտի ունենան Համազգայինի «Սիփան» եւ Երեսփոխանական Գրասենեակի «Նանօր» պատանեկան պարախումբերը՝ ձօնուած Ցեղասպանութեան 100-ամեակին:

Յաջորդ օրը, 18 Մայիսին, Կիպրոսի Համալսարանի սրահին մէջ, պիտի դասախօսէ թուրք հանրածանօթ պատմաբան Թանէր Աքչամ, «Հայկական Ցեղասպանութիւնը նոր դիտանկիւնէ՝ 100 տարի ետք» նիւթով:

12 Յունիսին, Նիկոսիոյ Համալսարանին Ամփիթատրոնին մէջ, տեղի պիտի ունենայ Նունէ Եսայեանի «Կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք» համերգը՝ ձօնուած Ցեղասպանութեան 100-ամեակին:

Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն, պիտի կայանայ Ուխտագնացութիւն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 100-ամեակին առթիւ, ապա Կիպրահայ գաղութի մարզիկներն ու մարզական խումբերը պիտի մասնակցին Հայաստանի մէջ կայանալիք Համահայկական 6-րդ խաղերուն:

22 եւ 23 Հոկտեմբերին, Պաֆոսի Markidion եւ Նիկոսիոյ Pallas սրահներուն մէջ յաջորդաբար, Հայկական եւ Եւրո-

պական դասական երաժշտական ծրագիրով ելոյթ պիտի ունենայ Կիպրոսի Սիմֆոնիք Նուագախումբը՝ ղեկավարութեամբ տաղանդաւոր խմբավար Յայկ Իւթիւճեանի:

Այս բոլորին կողքին, պիտի հեռասփռուին Յայկական Ցեղասպանութեան նուիրուած ֆիլմեր եւ վաւերագրական ժապաւէններ, յունարէն ենթախորագիրներով, Կիպրոսի Պետական Յեռատեսիլի կայանէն, որոնց մասին օրին պիտի տեղեկանաք:

Վերջապէս, երկլեզու (յունարէն/անգլերէն) գիրք մը պիտի հրատարակուի այս տարուան ընթացքին, որ պիտի պարփակէ Յայկական Ցեղասպանութեան նախորդող տարիներուն եւ 1914-1923 թուականներուն՝ յոյն կիպրական մամուլին մէջ լոյս տեսած յօդուածներ:

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

Հպատակություն

Յուճուար եւ Փետրուար ամիսներուն, երկար տարիներ Լիմասոլի մէջ օրինաւոր բնակութիւն հաստատած երկու հայրենակիցներ, ստացան Կիպրական հպատակութիւն:

Կիպրոսի եւ Կիպրահայ գաղութի կեանքէն

Կիրակի, 4 Յունուար 2015-ին, Պետական Ներկայացուցիչը յատուկ հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցաւ Ռուպինա Սվաճեանի «Սուլթանին Ստուերին Տակ» գիրքի շնորհահանդէսին, որ տեղի ունեցաւ Shoe Factory-ին մէջ, կազմակերպութեամբ Pharos Arts Հաստատութեան եւ համագործակցութեամբ Moufflon գրախանութիւն:

Կիրակի, 18 Յունուար 2015-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստ-



լածածին եկեղեցւոյ մէջ Մելգոնեան անմահ բարերարներու յիշատակին մատուցուած Հոգեհանգստեան պաշտօնին: Ապա, Պետական Ներկայացուցիչը, Սրբազան Հօր եւ ազգայիններու ընկերակցութեամբ, այցելեց Մելգոնեան բարերարներու դամբանը՝ իր յարգանքի տուրքը մատուցելու:

Երեքշաբթի, 20 Յունուար 2015-ին, Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան հրաւիրուեցաւ ներկայ գտնուելու եւ նրջանակներ յանձնելու՝ Մարզական Լուրեր Գրողներու Միութեան կազմակերպած ձեռնարկին, որու ընթացքին պարզեւատրուեցան 2014 թուականին յաջողութիւններ արձանագրած մարզիկներ: Ձեռնարկը, որ տեղի ունեցաւ «Հիլթըն Փարք» պանդոկին մէջ, կը վայելէր Կիպրոսի Մարզական Միութեան (KOA) հովանաւորութիւնը:

Երեքշաբթի, 10 Փետրուար 2015-ին, Պետական Ներկայացուցիչը յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցաւ Անգլիական Դպրոցի (English School) կազմակերպած բարեսիրական բնոյթ կրող երեկոյին, որ տեղի ունեցաւ դպրոցի սրահին մէջ: Ձեռնարկին, իր սրտի խօսքը փոխանցեց Պրն. Վարդգէս Մահտեսեան, որպէս Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ եւ դպրոցի նախկին շրջանաւարտ: Ապա, ծրագիրի գործադրումով, հանդէս եկան Սիմոն Այնէճեան եւ ներկայիս աշակերտուհի Սիմոնէաննա Արըճեան՝ ասմունքելով Յովհաննէս Շիրազի «Հրաշք» բանաստեղծութիւնը:

Չորեքշաբթի, 18 Փետրուար 2015-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, ներկայ գտնուեցան Կիպրոսի Հայոց Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբին կազմակերպած «Կանոնագրութիւն Կիպրոսի Հայոց Թեմին» դասախօսական երեկոյին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Վ. Իւթիւճեան» սրահին մէջ: Նիւթը ներ-

կայացուց Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Կիրակի, 22 Փետրուար 2015-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Վիքթորիա փողոցին մէջ գտնուող առաջնորդարանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցուած պատարագին:



Շաբաթ, 28 Փետրուար 2015-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, ներկայ գտնուեցան Համազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած ասնունքի երեկոյին, կատարողութեամբ Լիբանանահայ ասնունքող Յակոբ Գույունճեանի, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Վ. Իւթիւճեան» սրահին մէջ:

Կիրակի, 8 Մարտ 2015-ին, Պրն. Վարդգես Մահտեսեան Զ.Ս.Ը.Ս.-Յ.Ե.Ս.-ի մարզադաշտին մէջ խօսք առնելով, քաջալերեց Սարաթոն Արշաւը կազմակերպողները եւ մասնակիցները, անոնց մաղթելով յաջողութիւն: Իսկ կէսօրին, Տէր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Զ.Ս.Ը.Ս.-Յ.Ե.Ս.-ի ակումբի սրահին մէջ տեղի ունեցած ճաշկերոյթին, որ կազմակերպուած էր Սկաուտական Ծնողաց Խորհուրդին կողմէ՝ յետ Սարաթոն Արշաւին:



Հինգշաբթի, 12 Մարտ 2015-ին, Պետական Ներկայացուցիչը ընկերակցելով Փոքրամասնութիւններու հարցերով Նախագահական Յանձնակատար Պրն. Ֆոտիս Ֆոտիուի, այցելեց Նիկոսիոյ Նարեկ Հայկական Վարժարանը, ուր անոնք պատշաճ ձեւով դիմաւորուեցան Տնօրէնութեան, Հոգաբարձութեան անդամներուն, ուսուցչական կազմին եւ աշակերտութեան կողմէ:



Ուրբաթ, 13 Մարտ 2015-ին, Պրն. Վարդգես Մահտեսեան պաշտօնապէս հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցաւ Մարիոս Կարոյեանի Քաղաքական Գրասենեակի բացումին:

Կիրակի, 15 Մարտ 2015-ին, Տէր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գրտնուեցան Զ.Օ.Մ-ի «Սօսէ» մասնաճիւղի կազմակերպած աւանդական Միջինքի ճաշին, որ տեղի ունեցաւ Զ.Ս.Ը.Մ.-Զ.Ե.Ս.-ի ակումբի սրահին մէջ:

**Պաշտօնական մակարդակի
հանդիպումներ եւ ձեռնարկներ**

Հինգշաբթի, 5 Մարտ 2015-ին, Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգես Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Լրատուական Գործակալութեան (Cyprus News Agency) գլխաւոր խմբագիր եւ տնօրէն Պրն. Եորղոս Պէնիտաէքսի եւ տնօրէններու խոր-



հուրդի նախագահ Պրն. Լարքոս Լարքուի հետ: Պետական Ներկայացուցիչը անոնց փոխանցեց Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման առթիւ կազմակերպուելիք ձեռնարկներուն մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ լուսաբանութիւն տուաւ Կիպրահայ գաղութին հետ առնչուող կարգ մը հարցերուն մասին:

Իրենց կարգին, Լրատուական Գործակալութեան պատասխանատուները, խոստացան մամուլի ոլորտէն ներս առաւելագոյն կերպով օգտակար հանդիսանալ, Կիպրահայ գաղութի կազմակերպած ձեռնարկներուն տեղեկատուութիւնը հասանելի դարձնելու Կիպրոսի տարածքէն ներս եւ դուրս:

Նոյն օրը, կէսօրէ ետք, Պետական Ներկայացուցիչը ներկայութեամբ Սարոնիթ եւ Լատին համայնքներու ներկայացուցիչներուն, տեսակցութիւն մը ունեցաւ Կրօնական

Փոքրամասնութիւններու հարցերով Նախագահական Յանձնակատար Պրն. Ֆոտիս Ֆոտիովի հետ: Այս տեսակցութեան ընթացքին, քննուեցան 27 Մայիս 2015-ին, Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Պրն. Նիկոս Անաստասիատիսի նախաձեռնութեամբ՝ կիպրահայ գաղութին նուիրուած ձեռնարկին մանրամասնութիւնները, որ տեղի պիտի ունենայ Նախագահական Պալատին մէջ:



Չորեքշաբթի, 18 Մարտ 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Ոստիկանութեան Պետ Պրն. Զախարիաս Խրիսոստոմովի հետ, որու ընթացքին քննարկուեցան Կիպրահայութեան հետ առընչուող կարգ մը հարցեր:

Հինգշաբթի, 26 Մարտ 2015-ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Մարոնիթ եւ Լատին Կրօնական Փոքրամասնութիւններու ներկայացուցիչներուն,

հրաւիրուեցաւ տեսակցութիւն մը ունենալու Կիպրոսի մօտ Բրիտանիոյ Բարձր Յանձնակատար (British High Commissioner) Պրն. Րիք Թոտտի հետ:

ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Հիւպատոսի այց

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի հրաւերով, Հայաստանի Հանրապետութեան Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպանութեան Հիւպատոս Տիկին Մարիամ Յարութիւնեան միօրեայ այցելութեամբ ժամանեց Կիպրոս, Ուրբաթ, 20 Մարտ 2015-ին:

Նախապէս ապահովուած ժամադրութիւններով, Ուրբաթ օրուան ընթացքին մօտ 25 հայրենակիցներ ներկայացան Երեսփոխանական Գրասենեակ, որ իր բոլոր կարելիութիւններով Տիկին Հիւպատոսին տրամադրութեան տակ դրուած էր: Այս առիթով, ան ընդունեց նաեւ երկքաղաքացիութեան դիմումներ, որոնք ամբողջական էին:

Կէսօրին, Տիկին Յարութիւնեան, կարճ հանդիպում մը ունեցաւ Պրն. Վարդգէս Մահտեսեանի հետ, որու ընթացքին արժարժուեցան Կիպրոս հաստատուած ՀՀ քաղաքացիներու անձնագրային հարցերը:

Միօրեայ այցելութիւնը ավարտեցաւ յաջողութեամբ, գոհացում տալով ի մասնաւորի մեր այն հայրենակիցներուն պահանջներուն, որոնք երկրէն մեկնելու դժուարութեան դիմաց կը գտնուէին:

Նոյն օրը երեկոյեան, Տիկին Յարութիւնեան Յունաստան վերադարձաւ լաւագոյն տպաւորութիւններով:

Ուխտագնացութիւն Սուրբ Մակարայ Վանք

Հաճոյքն ունինք տեղեկացնելու մեր համայնքի անդամներուն, թէ Երեսփոխանական Գրասենեակի եւ Ազգային Առաջնորդարանի միացեալ կազմակերպութեամբ, Կիրակի, 10 Մայիս 2015-ին, տեղի պիտի ունենայ ուխտագնացութիւն դէպի Ս. Մակարայ Վանք:

Կը խնդրուի բոլոր անոնցմէ, որոնք կը փափաքին մասնակցիլ այս ուխտագնացութեան, արձանագրուիլ Երեսփոխանական Գրասենեակին մօտ հեռաձայնելով 22-454540 թիւին, փոխանցելով հետեւեալ մանրամասնութիւնները.-

- Անուն/Մականուն, ծննդեան թուական եւ վայր
- **Եւրոպական I.D.-ի** թիւ կամ ի զօրու անցագիրի (passport) թիւ
- Քաղաքացիութիւն

Կը խնդրուի հեռաձայնով փոխանցուած **Եւրոպական I.D.-ին** կամ **անցագիրը (passport) անպայմանօրէն** ձեր հետ ունենալ ուխտագնացութեան օրը:

Հանրակառքի սպասարկութիւն եւ մեկնում Նիկոսիոյ Ազգային Առաջնորդարանէն կ.ա. ժամը ճիշդ 11:00-ին:

Մասնակցութեան սակ՝ €10.00

*Ուխտագնացութեան արձանագրուելու եւ
չներկայանալու պարագային՝ վերոնշեալ գումարը կը
մնայ գանձելի:*

Արձանագրութեան վերջին օր՝ Երկուշաբթի, 4 Մայիս 2015

Երեսփոխանական Գրասենեակ

Վարդգես Եւ Մակի Մահտեսեաններ

Քրիստոսի Յարութեան

Սուրբ տօնին առիթով

կը շնորհաւորեն Կիպրահայ Զամայնքը

եւ մեր հայրենակիցները

մաղթելով՝

առողջութիւն եւ արեւշատութիւն

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,

Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

ԿԻՊՐԱՅԱՅ ԶԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42

Ել. Յասցէ office@armenianmp.com

Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42

Ել. Յասցէ vmahdessian@parliament.cy